



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 6 ՄԱՐՏ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 14


ՄԱՐԴՈՑ ԶԱՐՈՒԹԻՒՆԸ

Անմիտ մարդիկ իրենց մտքին մէջ ըսին. «Աստուած չկայ», ուստի ապականեցան եւ զգուելի արարքներու մէջ ինկան. չկայ մէկը որ բարին գործէ: Տէրը երկինքէն կը նայի մարդոց, տեսնելու համար թէ կա՞յ արդեօք իմաստուն մարդ մը, որ Աստուծոյ կը դառնայ: Ամէնքն ալ խտրեցան եւ մոլութեանց գիրկը ինկան. չկայ մէկը որ բարին գործէ, չկայ մէկը, ոչ իսկ մէկը: Երբեք խելքի պիտի չգա՞ն բոլոր անոնք, որոնք չարիք կը գործեն. անոնք՝ որոնք իմ ժողովուրդս կ'ուրբեն, հացի պէս, եւ Տիրոջ չեն աղօթեր: Բայց յանկարծակի՝ Տէրը զիրենք ահ ու դողի պիտի մատնէ, որովհետեւ Աստուած արդար մարդոց հետ է: Չարագործները աղքատին խորհուրդները կը հեգնեն, բայց Տէրը ինքն է անոր ապաւենը: Ոհ, տեսնէի Աստուծոյ ժողովուրդին փրկութիւնը, որ Սիոնէն պիտի գայ: Երբ Տէրը ետ դարձնէ գերի տարուած իր ժողովուրդը, Յակոբի սերունդները պիտի ցնծան եւ ուրախանան:

ՇԱՐԱԿԱՆ ԱՐՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հոշանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ

ՅԱԿՈԲՈՍ ՏԵԱՌՆԵՂԲՕՐ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ
3:13-18

ԵՐԿՐԱԲՈՐ ԵՒ ԵՐԿՆԱՅԻՆ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ (3:13-18)

Յակոբոս Առաքեալ խօսել է ու ներկայացնել յետոյ լեզուին դերը, ու անոր հետ կապուած վրանգը, ըստ այնմ օգտագործելու, կը շարունակէ իր նամակը եւ կ'անդրադառնայ երկու փեսակի իմաստութեան. երկնային՝ հոգեւոր ու երկրաւոր՝ դիւական, ճշմարիտ եւ սուր: Երկնային իմաստութիւն ունի ան, որ մաքուր է, խաղաղարար, ազնիւ, բարեացակամ, ողորմած, բարի գործերով արդիւնաւոր, անկողմնակալ եւ անկեղծ: Իսկ երկրային իմաստութիւն, կամ դիւական իմաստութիւն ունեցողը, կ'ըլլայ նախանձ, հակառակասիրութիւն, եւ արդիւնքը կ'ըլլայ անկարգութիւն եւ ամէն փեսակի չարիք: ուրեմն երկնային իմաստութիւն ունենալու համար միակ աղբիւրը Աստուած Ինք է, որուն համար ալ Առաքեալը իր նամակի սկիզբին յիշեցուց ըսելով. **«Եթէ ձեզմէ մէկը կը զգայ թէ անհրաժեշտ իմաստութիւնը չունի, թող խնդրէ Աստուծմէ, որ բոլորին կու փայ առաքօրէն եւ սիրայօժար կերպով, եւ Աստուած պիտի փայ իրեն: Բայց թող խնդրէ հաւաքքով, առանց երկմտելու»** (1:5-6):

Ինչ է այդ իմաստութիւնը, *«Իմաստութեան սկիզբը Տիրոջ երկիւղն է»* (Առակաց 10:10), առաւել եւս հեռու մնա չարիքէ: Այդպիսի իմաստութիւն ունեցողը, Յակոբոս Առաքեալ կ'ըսէ. **«մաքուր կ'ըլլայ»** (17 հմր), այսինքն՝ անոր մէջ չկայ ոչ մէկ փեսակի հետք նախանձի ու հակառակասիրութեան, կամ անկարգութեան եւ չարիքի: Ինչո՞ւ, որովհետեւ այսպիսի իմաստութիւն մը, բացարձակ մաքուր է: Իսկ մաքուր ըսելով ի՞նչ կը հասկնանք: Խաղաղարար. այլ խօսքով՝ խաղաղութիւն սիրող: Ազնիւ, բարեացակամ, ողորմած, ինչ որ Աստուծոյ ստորոգելիներէն մէկն է, Քրիստոս պիտի ըսէ. *«Ողորմած եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը ողորմած է»* (Ղուկ 6:36), բարի գործերով արդիւնաւոր, կը նշանակէ արդիւնք փութող, պտուղ փութող, որովհետեւ այդ պտուղը կը բացայայտէ մեր ով ըլլալը: Այդ պտուղը Քրիստոսի փութած պտուղն է, որովհետեւ պիտի ըսէ. *«Ես եմ որթափունկը եւ դուք՝ ճիւղերը: Ով որ ինձի միացած է եւ ես անոր՝ անիկա առաք պտուղ պիտի փայ, որովհետեւ առանց ինձի դուք ոչինչ կրնաք ընել»* (Յովի 15:5), որովհետեւ Ես եմ արդարութիւնը եւ իմաստութիւնը: Կը նշանակէ, երբոր Աստուած կու գայ եւ փեղ կը գրնէ մեր կեանքերուն մէջ, այն աստե՛ն աստիճանաբար կը սկսինք իմաստութիւնը ունենալու, խաղաղութիւն ունենալու, եւ խաղաղութիւնը սիրելու, ոչ կատարեալ, բայց արդէն այդ ընթացքին մէջ: Անկողմնակալ եւ անկեղծ: Լսող է, ենթարկուող է, ինչ որ բարիին ու լաւագոյնին կողմնակից է:

Յակոբոս Առաքեալ այս բոլորը կը ներկայացնէ, որպէսզի անով բացայայտէ, թէ ինչպիսի կեանքով պէտք է ապրի քրիստոնէայ հաւաքացեալը: Կ'ըսէ. **«Ձեր մէջ իմաստուն մարդ կայ՝ թող ցոյց փայ՝ իր օրինակելի կեանքով, հեզութեան ու իմաստութեան գործերով»** (13 հմր): Ցոյց փութ: Իմաստութիւնը վկայականին մէջ չէ: Գիրքեր կարդացած կամ գրած ըլլալուն մէջը չէ: Այլ հեզութեան ու խոնարհութեան մէջ, որ ցոյց կու փայ քրիստոնէայ կեանքի արժէքը: Որովհետեւ ճշմարիտ իմաստութիւն ունեցողը գիտէ թէ ինք բան մը չի գիտեր: Իսկ այս խոնարհութիւնը կու գայ երբ ունինք գիտակցութիւնը, որ ամէն բանէ առաջ կու գայ Աստուած, եւ աւարտը՝ Աստուած, որովհետեւ Ինքն է սկիզբն ու վախճանը: Ինքն է առաջինն ու վերջինը: Ուրեմն, իմաստութիւն, խոնարհութիւն, գործ, արժէքաւոր կեանք: Որովհետեւ վերջ ի վերջոյ իւրաքանչիւր քրիստոնէայ հաւաքացեալի կոչումն է նմանիլ Քրիստոսի: Մեծնալու, ստրկելու եւ սիրելու: